ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼՂՀ ֆինանսների նախարարության 2016 թվականի մարտ ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2016 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում ԼՂՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 5945.1 մլն դրամ՝ պլանավորված 5700.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 4.3 %-ով կամ 245.1 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 4.5 %-ով կամ ավել 255.6 մլն դրամով:

Մարտ ամսում ԼՂՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 2549.0 մլն դրամ՝ պլանավորված 2345.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 8.7 %-ով կամ ավել 204.0 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) են թվով 110 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել (հաշվառումից հանվել)՝ 1 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել են 69 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել է 108.6 մլն դրամ: Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 109 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 71-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 8-ական՝ գործունեության չծավալման և ապրանքների շրջանառության ու ծառայությունների մատուցման ծավալների, ինչպես նաև իրացման փաստացի գների չափագրման, 6-ական՝ հարկային հաշվանցումների և վերադարձի հիմնավորվածության և ակցիզային դրոշմանիշների շարժի ու դրոշմավորման կանոնների պահպանման և 10 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում «Հարկերի վճարումից խուսափելու և հարկային իրավախախտումների դեմ պայքարի» հայեցակարգի շրջանակներում շարունակվել են հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ճշտության, ապօրինի գործունեության ծավալման, չձևակերպված վարձու աշխատողների բացահայտմանն ուղղված հսկողական միջոցառումները, որոնց արդյունքում արձանագրվել են հսկիչ-դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների

կանոնների խախտման 19, ապօրինի ձեռնարկատիրական գործունեության իրականացման 1 և վարձու աշխատողների չձևակերպման 2 դեպքեր:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել 16 վարչական գործ՝ 18.6 մլն դրամ գումարով, ավարտվել՝ 14 վարչական գործ, որով բավարարված գումարը կազմել է 50.4 մլն դրամ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 123 վարչական գործով սահմանվել է 1.7 մլն դրամ վարչական տուգանք:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել են 6600 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 5395:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 88 պայմանագիր:

Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման գործընթացի շրջանակներում կատարվել է վերադարձ 11 վարձու աշխատողի՝ 1.4 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 40 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Ֆինանսների նախարարի հրամաններով հաստատվել է «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարության էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման մասնագիտացված աշխատանքային խմբերի աշխատակարգը», «Նոր ստեղծված հարկ վճարողներին օժանդակության և սպասարկման ծառայությունների նպատակով այցելությունների կանոնակարգը», «Հարկային ծառայողների հետ կազմակեպվելիք ուսուցողական սեմինարների ծրագիրը և ժամանակացույցը», փոփոխություններ կատարվել «Հարկային վարչարարության բարեփոխումների խորհրդի աշխատակարգում»:

Հաշվետու ամսում կայացել է նաև հարկային վարչարարության բարեփոխումների խորհրդի նիստ:

ՀՀ և ԼՂՀ հարկային մարմինների միջև իրականացվել են անուղղակի հարկերի հաշվանցումների համար հիմք հանդիսացող փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

2016 թվականի 1-ին եռամսյակում հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կազմակերպվել են 586 տնտեսավարող սուբյեկտների ընդունելություն, որոնց արդյունքում պարզաբանվել են վերջիններիս հուզող հարցերը:

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

Հաշվարկ-հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ներկայացման գործընթացում հարկ վճարողներին աջակցելու նպատակով մարտ ամսում թվով 95 հարկ վճարողների համար անց է կացվել «Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների լրացման և հանձնման ընթացակարգեր» թեմայով ուսուցողական դասընթացներ:

Հաշվետու ամսում ֆինանսների փոխնախարար Ա. Հարությունյանը հարկային ոլորտում կատարվող բարեփոխումների վերաբերյալ հարցազրույց է տվել «Ազատ Արցախ» թերթին:

Հաշվետու ժամանակահատվածում հարկային մարմին է մուտքագրվել 330, ելքագրվել՝ 158 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի: